

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 1 Յուլիս. — Ս. Գր. Լուսաւորչին (Ելն ի վիրապէն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագանց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.: Ապա ծնրագիր Տէր ողորմեաւ երգուեցաւ:

● Կիր. 2 Յուլիս. — Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Նախագանց էջարապետական Մաղթանքին:

● Եր. 8 Յուլիս. — Ս. Մեծին Ներսիսի եւ Խաղայ եպիսկոպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կոմիտաս Վրդ. Եւրպէթեան:

● Կիր. 9 Յուլիս. — Բարեկենդան Ս. Լուսաւորչի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռազմիկ Վրդ.:

● Ուր. 14 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագանց Գերշ. Տ. Սեան Եպս.:

● Եր. 15 Յուլիս. — Ս. Գր. Լուսաւորչին (Գիւն Եւրպէթ): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Մակարայ մատրան մէջ, ուր ըստ աւանդութեան թաղուած է մատունքը մեր Հաւատոյ Հօր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գուսան Վրդ. Ալանեան:

● Կիր. 16 Յուլիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Նոր Երուսաղէմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղիսեան, որ քարոզեց երէկուան տօնին մասին:

● Դշ. 19 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագանց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Եշ. 20 Յուլիս. — Ս. Թարգմանչաց վարդապետաց մեծոք Սանակայ եւ Մեսրոպայ (Տօն ազգային): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

● Եր. 22 Յուլիս. — Ս. Տղաւայ քաղաւորին եւ Աւիսին իկնոցն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գուսան Վրդ. Ալանեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագանց Գերշ. Տ. Սեան Եպս.:

● Կիր. 23 Յուլիս. — Գիւն Տիոյ Ս. Աստուածածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աստուածածնին, Տիրամօր Սուրբ Գերեզմանին

վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կոմիտաս Վրդ.: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Գերշ. Տ. Սեան Եպս.:

● Ուր. 28 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագանց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

● Եր. 29 Յուլիս. — Երկոստան առաքելոցն Քրիստոսի եւ Պողոսի՝ երեքստաներոց առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

● Կիր. 30 Յուլիս. — Բարեկենդան Վարդավառի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղիսեան:

● Ուր. 4 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարի Ս. Էջմիածին մատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեան Եպս.:

● Եր. 5 Օգոստ. — Յիւսակ Տապանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Էջմիածին: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վանիկ Վրդ.:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Հրաշափառով մուտք գործեց Մայր Տաճար, ուր Նախագանց Այլակերպութեան մեծահանգէս Նախատօնակին, որմէ ետք կատարուեցաւ Տեառնեղբոր դահակալութեան նուիրուած հանդիսութիւն: Արարողութեան ներկայ եղան Իսրայէլի հիւանդանոցներուն մէջ դարմանուող Հայրենական երկրաշարժի զոհերը:

● Կիր. 6 Օգոստ. — ՎԱՐԳԱՎԱՌ (Տօն Այլակերպութեան Տեառն): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսաւորապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գաղանճեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Անդառառն: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

● Բշ. 7 Օգոստ. — Յիւսակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխագիր մատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Հոգչ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողկեան: Ներքին գալին մէջ կատարուած հոգեհանգստեան կարգին Նախագանց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

● Ուր. 11 Օգոստ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագանց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Եր. 12 Օգոստ. — Ս. Թաղեոսի առաքելոյն եւ Սանդիսոյ կուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Կոմիտաս Վրդ. Եւրպէթեան:

● Կիր. 13 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ապա կատարուեցաւ Տաղադորնէքի արարողութիւն, Նախագանցութեամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Բշ. 14 Օգոստ. — Այսօր ոկսաւ Ս. Կոյի վերափոխման տօնը կանխող կէս-հանդիսաւոր պատարագներու մատուցումը, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ ի Ս. ԱԾածին (Գեթսեմանի):

● Եր. 19 Օգոստ. — Եփեսոսի Ս. Ժողովոյն (431): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աճածին: Ժամարարն էր Հոգւ. Տ. Թաղմիկ Վրդ.:

● Կիր. 20 Օգոստ. — Բաբկենդան Ս. Աստուածանի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ զարծեալ ի Ս. Աճածին: Ժամարարն էր Հոգւ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան: Քարոզեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

● Ուր. 25 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատուռին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

● Եր. 26 Օգոստ. — Տօն Շողակաթի Ս. Էջմիածին: Ս. պատարագը մատուցուեցաւ ի Ս. Աճածին: Ժամարարն էր Հոգւ. Տ. Անուշաւան Վրդ. Զղիշանեան:

— Կէսօրէ կտք, Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթսեմանի ձորը ու շրջափառով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը:

— Իրիկնադէմին, հոն պաշտուած եկեղեցէի և Հսկման կարգերուն և նախագահեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

● Կիր. 27 Օգոստ. — ՎերԱՓնոՒՄՆ Ս. ԱՌՏՈՒԱԾԱԾՆԻ: Այս մեծ տօնը այս տարի զաւգադիպած ըլլալով Յունաց Ս. Կոստի Ննջման տօնին, մեր հանդիսութիւնները սկսան և աւարտեցան սփորակաւէն կանուխ: Առաւօտեան ժամը 7.30ին, զարծեալ Գերշ. Տ. Դաւիթ Սրբազանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով իջաւ Գեթսեմանի ձորը ու շրջափառով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցւ: Ետին խորհուրդին շուրջ քարոզեց և Անդաստանին նախագահեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

— Կէսօրէ կտք, Մայր Տաճարին մէջ ևս կատարուեցաւ Անդաստան, որուն, ինչպէս նաև նախատօնակին, նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս.:

● Բշ. 28 Օգոստ. — Յիւսակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Հանգստեան կարգին նախագահեց Գերշ. Տ. Սեան Եպս.:

● Եր. 2 Սեպտ. — Է. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողեան:

● Կիր. 3 Սեպտ. — Ը. օր Վերափոխման: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան երաշխաւոր Ս. Աստուածածնին մատուռին մէջ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Գերշ. Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան:

● Բշ. 4 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

● Գշ. 5 Սեպտ. — Ս. Յովակիմայ Է. Աննայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովակիմ Գերեզմանին վրայ: Ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգւ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայեան:

● Եր. 9 Սեպտ. — Ս. Թովմայի առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգւ. Տ. Ռուբէն Վրդ.:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս.:

● Կիր. 10 Սեպտ. — Գիւն Գօսոյն մ. Աստուածանի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան: Մայրութեան զաղափարին շուրջ քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Քարեգին Արքեպս.: Կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ երեք օրեր առաջ Տաճարի մաքրութեան մասնակցողներու (տիկիներ և օրիորդներ) հանգուցեալ հարազատներու հոգիներուն համար: Ներկայ էր զաղուծիս մեծամասնութիւնը — Հոգեւորճ տրուեցաւ ապա Գեթսեմանի պարտէզը:

● Եր. 16 Սեպտ. — Նիկիոյ Ս. Ժողովոյն (325): Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգւ. Տ. Կոմիտաս Վրդ.:

● Կիր. 17 Սեպտ. — Բաբկենդան Ս. Խաչի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, մեր վերնատարան մէջ: Ժամարարն էր Հոգւ. Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

● Դշ. 20 Սեպտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սեան Եպս.:

● Եշ. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Սեան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու շրջափառով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

● Եր. 23 Սեպտ. — Տօն եկեղեցւոյ ի նաւակախ Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգւ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

— Խաչվերացի մեծահանգէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Քարեգին Արքեպս., որ ապա Կենաց Փայտի մատուռը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

— Գերշ. Տ. Դաւիթ Եպս. նախագահեց իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ պաշտուած եկեղեցէի և Հսկման կարգերուն:

● Կիր. 24 Սեպտ. — Տօն ՎերԱՅՄԱՆ Ս. ԽԱՉԻՆ (629): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց

Լուսարարացեալ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., որ քարազեց խաշին խորհուրդին և անարմար մեաւորած զանգուծեան գաղափարին շարքէ Գերշ. Տ. Գիւրեղ Սպս. նախագահեց Կարապետ և Գրիգոր Մեկգոնեան բարերար եղբարց հագիներուն համար կատարուած տարեկան հագեանգտեան պաշտամունքին:

— Կէսօրէ ետք, Գերշ. Լուսարարացեալ Սրբազանը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած խաչվերացի մեծ Անդառատունիին:

● Բշ. 25 Սեպտ. — Իսաակ մեղեց: Մայր Տաճարի Ս. Գլխագրի մատրան մէջ պատարագեց Լոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զգջանեան Գերշ. Տ. Գիւրեղ Սպս. նախագահեց հագեանգրեան պաշտամունքին, որ կրկնուեցաւ Գաւիթը՝ Տ. Գիւրեղ Պատրիարքի շիրմին մօտ:

● Եր. 30 Սեպտ. — Տօն հայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերամատարան մէջ: Ժամարարն էր Լոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Ասողկեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Գշ. 4 Յուլիս. — Երեկոյեան, Ամերիկայի Միացեալ Նահանգաց Անկախութեան 213րդ տարեգարծին առթիւ, Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարացեալ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Լոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գէորգ Հինգլեան:

● Աւր. 7 Յուլիս — Կէսօրէ ետք, Լոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. ներկայ եղաւ Յայն-Կաթոլիկներու եկեղեցիին մէջ կատարուած Ժանօթ բժշկի Աստ Պիշարայի յազարկատարութեան: ● Աւր. 14 Յուլիս. — Կէսօրին, Ծրանսահան Բեզափառութեան 200 ամեակին առթիւ, Ծրանսահան Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարացեալ Գերշ. Տ. Գարեգին և Գերշ. Տ. Սեան Սրբազաններ, ընկերակցութեամբ Լոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գէորգ Հինգլեանի:

— Կէսօրէ ետք, Նոյն առթիւ Տէ. Anne եկեղեցւոյ մէջ, Ծրանսահան Հիւպատոսի ներկայութեամբ մատուցուած Ս. Պատարագին և պարտէզը տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Գիւրեղ Սպս. և Լոգշ. Տ. Ռազմիկ Վրդ.:

● Եր. 15 Յուլիս. — Նոյն առթիւ և Նոյն վայրին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Սրբազանէն և Լոգշ. Զօրմէն զատ, Տեառք Գէորգ Հինգլեան և Սահակ Գալստեան:

● Գշ. 18 Յուլիս. — Սպանական Հիւպատոսի քաղաքէս պաշտօնով մեկնելուն առթիւ, Հիւպատոսարանի մէջ տրուած ոգշերթի ընդունելութեան ներկայ եղան Լուսարարացեալ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Լոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գէորգ Հինգլեան:

— Գերշ. Տ. Գաւիթ Սպս. Սահակեան, Միաբան Ս. Ռախիս, Ժամանեց Ս. Աթոս, ահարար մեալու համար մեր մէջ:

● Աւր. 21 Յուլիս. — Սպանական Հիւպատոսը հրամեշտի այցելութեան եկաւ Պատրիարքարան:

● Գշ. 25 Յուլիս. — Իսաակեան Հիւպատոս Մարինա Յիւրիի քաղաքէս պաշտօնով փոխադրուելուն առթիւ, Հիւպատոսարանի մէջ կայացած հրամեշտի ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Գիւրեղ Սպս. և Տիար Հինգլեան:

● Եր. 25 Օգոս. — Հայաստանի երկրաշարժի ազդեանները, թիւով 61, որոնք 28 Յունիսէն ի վեր կը գարմանաւելին իսրայէլի հիւանդանոցներուն մէջ (Ռաւպան՝ Հայֆա և Թէլ Լաւա՝ Զօրմէն Բէլ Բէլի մօտ), իրենց օրը անցուցին Երուսաղէմ: Նախ այցելեցին Ս. Յարութեան Տաճարը, ուր հարկ եղած քաջատարութիւնները ստացան Գերշ. Տ. Գիւրեղ Սրբազանէն և ապա հաշեցին Հայ Երիւ. Միութեան սրահին մէջ, Կէսօրէ ետք, անոնք նախ ներկայ գտնուեցան Ս. Յարութեանց Մայր Տաճարի մէջ պաշտամով Այլակերպութեան նախատեսակին, սկսելով շնորհակցութեամբ մատուցել, յետոյ Տաճարի զանազան մասերուն շարք քաջատարութիւններ տրուեցան իրենց Տ. Գիւրեղ Սրբազանէն: Լ. Մ. Ը. Մ. ի ակումբէն ներս կատարուած կարճ հիւրասիրութեան մը ետք, անոնք բարձրացան Պատրիարքարանի զանկիւր, ուր ընթերցին Ն. Ամեն. և Միաբանութեան անդամներուն հետ աւաւագոյն տպագրութիւններով մեկնեցան, մեղմացած զգալով բնութեանն ստացած իրենց անաւար հարուածին վիշտը: — 15 Օգոստոս, Երեքշաբթի, առաւօտեան արշալոյսին, Պէն-Կարբոն օդակայանէն անոնք Թաւն գէպի Մայր Հայրենիք:

● Կիր. 13 Օգոս. — Ս. Ռախիս երիտասարդ Միարան Լոգշ. Տ. Եղնիկ Վրդ. Պայեան շորտ տրուան համար Նիւ Եօքլէն Ժամանեց Ս. Աթոս:

● Եշ. 17 Օգոս. — Աւագ Թարգման Լոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. և Տիար Գ. Հինգլեան ներկայ եղան Լուսարարականներու սրահին մէջ տրուած լոթիլի հիւրասիրութեան Լուսարարական հագեանքակներու համագումարի փակման առթիւ:

● Աւր. 1 Սեպտ. — Այսօր վերադարձուեցաւ Ս. Թարգմանաց Երկրորդական Վարժարանը, եռամեայ ամառնային արձակուրդէն յետոյ: Երկուս աշակերտութեան թիւն է 150:

● Եր. 2 Սեպտ. — Կէսօրին, Ռուս հագեարակներու երկուս պատուիրակութիւն մը այցելեց Պատրիարքարան:

● Կիր. 3 Սեպտ. — Երեկոյեան, Լոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Տիար Գ. Հինգլեան ներկայ գտնուեցան Փնէսէթի մէջ կայացած Կրտնից Նախարարութեան կողմէ կատարուած պարգևատրութեան հանգէին:

● Գշ. 5 Սեպտ. — Սպանական Նար Հիւպատոս իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին: